Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

«ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԵՐԿՈՒ ՓՈՒԼՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն 2

«22» «09» 2019թ.
Ժ.15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ալֆրեդ Քոչարյան

Հանձնաժողովի անդամներ՝

Աստղիկ Մարաբյան, Գառնիկ Մոմջյան, Գոհար Սահյան, Զարուհի Հայրապետյան, Դավիթ Պողոսյան, Արմեն Հովհաննիսյան, Անահիտ Միքայելյան, Գուրգեն Գասպարյան, Անուշ Բաբայան, Մարինա Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

Բացակայում էր՝

Հանձնաժողովի անդամ՝ Անի Պապիկյան

1. «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի նախաորակավորման հայտերի ներկայացման մասին

(Ալֆրեդ Քոչարյան)

1.1 «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգին սահմանված կարգով և ժամկետներում նախաորակավորման հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«Վեբէքս թեքնոլոջիս» ՍՊԸ	info@webex.am
2	Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյան	sevoyanjanik@gmail.com
3	«ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ	info@bestsoft.am
4	«ԴԸ ՕՆԼԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	office@the-only-group.com
5	«ԴիջիՖենս» ՍՊԸ	info@digifence.am
6	«Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «Ինֆոտեխ» ՍՊԸ կոնսորցիում	arzumanyan@hs.am
7	«4 ՍՏԵՊՍ» ՍՊԸ	4stepsarmenia@gmail.com
8	«Լոմա Սիստեմս» ՍՊԸ, «ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ և «ԿԻՆՈՊԼԱՆ» ՍՊԸ կոնսորցիում	info@loma.am
9	«ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ	d.shahbazyan@itresources.am

2. «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի նախաորակավորման հայտերի բացման և գնահատման մասին

(Ալֆրեդ Քոչարյան)

2.1 Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

2.1.1 Մասնակիցների կողմից նախաորակավորման հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 11 դեմ – 0

2.2 Տվյալներ մասնակիցների հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

2.2.1 Մասնակիցների կողմից ներկայացրած նախաորակավորման հայտերում առկա են նախաորակավորման հայտարարությամբ սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 11 դեմ – 0

2.3 Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

2.3.1 Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման նպատակով որոշվեց կասեցնել նիստը և այն շարունակել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը ուսումնասիրելուց հետո՝ 2022թ սեպտեմբերի 29-ին, ժամը 15:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 5-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 11 դեմ – 0

ՀԱՆՁԱՆԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ ՇԱՐՈՒՆԱԿՎԵՑ 29.09.2022Թ ԺԱՄԸ 15:00-ԻՆ

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ալֆրեդ Քոչարյան

Հանձնաժողովի անդամներ՝

Աստղիկ Մարաբյան, Գառնիկ Մոմջյան, Գոհար Սահյան, Զարուհի Հայրապետյան, Դավիթ Պողոսյան, Արմեն Հովհաննիսյան, Անահիտ Միքայելյան, Գուրգեն Գասպարյան, Անուշ Բաբայան, Մարինա Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

Բացակայում էր՝

Հանձնաժողովի անդամ՝ Անի Պապիկյան

3. «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի նախաորակավորման հայտերի գնահատման մասին

(Ալֆրեդ Քոչարյան)

3.1 Տվյալներ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

3.1.1 Մասնակիցներ՝ **Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյանի, «ԴԸ ՕՆԼԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի, «Դիջիֆենս» ՍՊԸ-ի, «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «Ինֆոտեխ» ՍՊԸ կոնսորցիումի և «4 ՍՏԵՊՍ» ՍՊԸ-ի** կողմից նախաորակավորման հայտերով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 11 դեմ – 0

3.1.2 **«Վեբէքս թեքնոլոջիս» ՍՊԸ-ի** կողմից նախաորակավորման հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ հայտով ներկայացված Հավելված 2-ում բացակայում են նախկինում իրականացված պայմանագրերի պատվիրատուների հետ կապ հաստատելու տվյալները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 11 դեմ – 0

3.1.3 **«ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ-ի** կողմից նախաորակավորման հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ հայտով ներկայացված Հավելված 2-ում բացակայում են նախկինում իրականացված պայմանագրերի պատվիրատուների հետ կապ հաստատելու տվյալները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 11 դեմ – 0

3.1.4 **«Լոմա Սիստեմս» ՍՊԸ, «ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ և «ԿԻՆՈՊԼԱՆ» ՍՊԸ կոնսորցիումի** կողմից ներկայացված հայտը հաստատված չէ կոնսորցիումի բոլոր անդամների կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 11 դեմ – 0

3.1.5 **«ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի** կողմից նախաորակավորման հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- բացակայում է նախկինում իրականացված՝ 2019 թվականի 3-րդ պայմանագրով և 2020 թվականի պայմանագրերով նախատեսված գնման առարկան,
- բացակայում են նախկինում իրականացված պայմանագրերի պատվիրատուների տվյալները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 11 դեմ – 0

4. «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի նախաորակավորման հայտերի գնահատման գործընթացի կասեցման մասին

(Ալֆրեդ Քոչարյան)

4.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված

«Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել մասնակիցներ՝ **«Վեբէքս թեքնոլոջիս» ՍՊԸ-ին, «ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ-ին, «Լոմա Սիստեմս» ՍՊԸ, «ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ և «ԿԻՆՈՊԼԱՆ» ՍՊԸ կոնսորցիումին և «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 3.1.2-ից 3.1.5-րդ կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 11 դեմ – 0

4.2 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 2022թ հոկտեմբերի 3-ին, ժամը 15:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 5-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 11 դեմ – 0

ՀԱՆՁԱՆԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ ՇԱՐՈՒՆԱԿՎԵՑ 03.10.2022Թ ԺԱՄԸ 15:00-ԻՆ

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ալֆրեդ Քոչարյան

Հանձնաժողովի անդամներ՝

Աստղիկ Մարաբյան, Գառնիկ Մոմջյան, Գոհար Սահյան, Զարուհի Հայրապետյան, Անի Պապիկյան, Դավիթ Պողոսյան, Արմեն Հովհաննիսյան, Անահիտ Միքայելյան, Գուրգեն Գասպարյան, Անուշ Բաբայան, Մարինա Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

5. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին

(Ալֆրեդ Քոչարյան)

5.1 Մասնակիցներ՝ **«Վեբէքս թեքնոլոջիս» ՍՊԸ-ն**, **«ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ-ն, «Լոմա Սիստեմս» ՍՊԸ-ն, «ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ և «ԿԻՆՈՊԼԱՆ» ՍՊԸ կոնսորցիումը** և **«ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն** սահմանված ժամկետում շտկել են հանձնաժողովի կողմից 3.1.2-ից 3.1.5-րդ կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 12 դեմ – 0

6. «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի նախաորակավորված մասնակիցների ցուցակը հաստատելու մասին

(Ալֆրեդ Քոչարյան)

6.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասը՝ հաստատել «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի նախաորակավորված մասնակիցների ցուցակը.

Հ/Հ	Նախավորակավորված մասնակցի անվանումը
1	«Վեբէքս թեքնոլոջիս» ՍՊԸ
2	Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյան
3	«ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ
4	«ԴԸ ՕՆԼԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
5	«ԴիջիՖենս» ՍՊԸ
6	«Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «Ինֆոտեխ» ՍՊԸ կոնսորցիում
7	«4 ՍՏԵՊՍ» ՍՊԸ
8	«Լոմա Սիստեմս» ՍՊԸ, «ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ և «ԿԻՆՈՊԼԱՆ» ՍՊԸ կոնսորցիում
9	«ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 12 դեմ – 0

7. «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի նախաորակավորված մասնակիցներին առաջին փուլի հրավերը ներկայացնելու մասին

(Ալֆրեդ Քոչարյան)

7.1 Հաստատել գնման առարկայի հատկանիշները՝ որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրերի նախնական տարբերակ /կցվում է/ և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 81-րդ կետը՝ «ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի նախաորակավորված մասնակիցներին ներկայացնել այն որպես առաջին փուլի հրավեր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 12 դեմ – 0

7.2 Առաջին փուլի հայտեր ներկայացնելու ժամկետ սահմանել՝ նախաորակավորված մասնակիցներին հրավերի տրամադրման օրվանից հաշված 25-րդ օրացուցային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 12 դեմ – 0

7.3 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել նախաորակավորված մասնակիցների կողմից առաջին փուլի հայտերը ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետը լրանալուց հետո՝ ոչ ուշ, քան 10-րդ օրը, ժամը 11:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 9-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 12 դեմ – 0

Գնահատող հանձնաժողով՝

Նախագահ՝ Ալֆրեդ Քոչարյան

Անդամներ՝ Աստղիկ Մարաբյան

Գառնիկ Մոմջյան

Գոհար Սահյան

Զարուհի Հայրապետյան

Անուշ Բաբայան

Անի Պապիկյան

Մարինա Հակոբյան

Դավիթ Պողոսյան

Արմեն Հովհաննիսյան

Անահիտ Միքայելյան

Գուրգեն Գասպարյան

Քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

«ՀՀԿԳՄՍՆԵՄԾՁԲ-22/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԵՐԿՈՒ ՓՈՒԼՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ (ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ) ՆԿԱՐԱԳՐԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

Նախաորակավորված մասնակցի կողմից ներկայացվելիք առաջարկները հետևյալն են.

1. համակարգի նկարագիրը,
2. համակարգի ֆունկցիոնալությունը,
3. համակարգի կառուցվածքը (սխեմա),
4. Ցանցի կառուցվածքը,
5. Սերվերային ենթակառուցվածքի նկարագիրը, ներառյալ պահուստային սերվերները,
6. Ծրագրա-սարքավորումային ապահովման նկարագիրը,
7. Գործակալների հետ աշխատանքի նկարագիրը (համակարգի հնարավորությունները),
8. Ֆինանսական մոդելները (ներդրող, շահագործող և սպասարկող կազմակերպություն-գործակալ-պատվիրատուի կազմակերպություններ),
9. Անձնակազմի և իրենց պարտականությունների նկարագիրը,
10. Տեխնիկական կահավորման և աջակցման մանրամասն նկարագիրը,
11. Պպատվիրատուի կազմակերպությունների (թանգարանային) աշխատանքի նկարագիրը (կարելի է ավելացնել սխեմաներ),
12. սկզբնաղբյուրների սեփականության և/կամ օգտագործման իրավունքի ձևերը,
13. պայմանագրի կատարման ժամկետը (առաջարկվող ժամկետի տնտեսագիտական հաշվարկ- հիմնավորում):

Առաջարկում ենք հաշվի առնել նոր միասնական տոմսային տնտեսության հետևյալ պայմանները.

- Սարքավորումների հնարավորինս քիչ հավելումներ թանգարանի հատկապես գլխավոր մուտքի հատվածում,
- Առցանց տոմսերի ձեռքբերման լայն հնարավորություններ
- QR կոդերով տոմսերի ճանաչման հնարավորություն
- Տարբերակված գներով /զեղչ/ տոմսեր ձեռք բերելու հանարավորություն
- Տոմսերի ձեռքբերման առանձին և ապահով ցանցային կայք և գովազդային հնարավորություններ
- Յուրաքանչյուր օր համակարգի մեկնակրը՝ զրոյանակ գումարով
- Ամեն հաջորդ օր տոմսերի գումարի փոխանցում թանգարանի հաշվեհամարին
- Ծրագրի աշխատանք առանց նաև ցանցային կապակցման կամ «օֆ լայն» ռեժիմով
- Ժամանակավոր ցուցադրությունների տոմսերի առանձին վաճառքի հնարավորություն
- Տոմսի վավերականության ժամկետի ֆիքսում
- Անվճար կամ արտոնություններով այցելությունների արձանագրում

- Նույնաբնույթ կամ տարաբնույթ թանգարանների այցելության դեպքում թանգարանային զեղչային տոմսերի վաճառք և այցելության դեպքում համապատասխան գումարների տարաբաշխում
- Նաև այլ էլեկտրոնային վաճառքի միջոցների հետ ներդաշնակում
- Կրկնակի այցելությունների խրախուսման ծրագրերի հնարավորություն
- Այցելուների հետ կապված որոշակի տեղեկատվության գեներացման հնարավորություն:

1. Թանգարաններում էլեկտրոնային տոմսերի միասնական ավտոմատացված համակարգը առաջին հերթին պետք է հնարավորություն ունենա հսկելու տոմսերի շարժը (ցանկացած պահի հաշվապահները պետք է կարողանան հաշվետվություն ստանալ տվյալ օրը/պահին վաճառված տոմսերի քանակի վերաբերյալ՝ ըստ կատեգորիաների):
2. Համակարգը պետք է հնարավորություն ունենա QR կամ Bar կոդի գեներացման և տոմսի վրա արտացոլման համար, որպեսզի հսկող սարքերը կարողանան կատարել իրենց գործը և ունենան լրացուցիչ հաշվառման հնարավորություն:
3. Համակարգը պետք է հնարավորություն տա անցկացնելու ֆինանսական մոնիթորինգ:
4. Համակարգը պետք է ունենա տոմսերի առցանց ձեռքբերման հնարավորություն:
5. Համակարգը պետք է ունենա նախապես (օր.՝ մի քանի օր/ամիս առաջ) ձեռքբերված տոմսերի քանակը և օրերը պահպանելու և հիշեցնելու հնարավորություն:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Միասնական տոմսային համակարգը պետք է ունենա.

- հեռախոսային հավելվածի հնարավորություն,
- էլեկտրոնային փոստի հասցեով ամրագրումներ կատարելու հնարավորություն,
- QR կոդ:

Պատուհան 1. Մուտքի տոմսերն իրենց արժեքներով, և բոլոր առանձնահատկություններով (զբոսաշրջիկներ, տեղացիներ, սեռեր),

Պատուհան 2. Էքսկուրսիոն գնացուցակները և էքսկուրսիաների տիպերը (աուդիոէքսկուրսիա, թեմատիկ էքսկուսիա և այլն),

Պատուհան 3. Թանգարանների միջոցառումները, կայանալիք ժամանակավոր ցուցահանդեսները, կրթական ծրագրերը և այլն,

Պատուհան 4. Գովազդային բաժին,

Պատուհան 5. Ամսվա հյուրը, որի միջոցով կունենանք պոտենցյալ այցելուներ,

Պատուհան 6. Բոնուս առաջարկներ (օգտվելով նշած թանգարաններից այցելուն մեկ այլ թանգարան այցելեու և թանգարանի հուշանվերային խանութից զեղչային տարբերակով օգտվելու հնարավորություն կունենա),

Պատուհան 7. Թանգարանների խանութների հուշանվերները, գրքերը, որոնք հնարավորություն կտան օնլայն գնման,

Պատուհան 8. Բաց դռների օրվա առաջարկներ,

Պատուհան 9. Համակարգի վերաբերյալ առաջարկություններ և կարծիքներ,

Պատուհան 10. Հարցեր և պատասխաններ,

Պատուհան 11. Տեղակայության նկարագիր (քարտեզ, տրանսպորտային միջոցներից օգտվոլու ժամաքանակ, քայլելու ժամաքանակ),

Պատուհան 12. Տոմսերի տրամադրման ինտեգրված սխեմաները, որոնք կատարածվ են այլ հավելվածների վրա (տուրիստական փաթեթներ, գրախանութներ, հյուրանոցներ, հյուրատներ և այ սպասարկման վայրեր),

Պատուհան 13. Ապահովել բոլոր երկրների ժամանակացույցերի և սակագների վերաբերյալ տեղեկատվության հեշտ հասանելիության ռեժիմները,

Պատուհան 14. Պատուհան արագ վճարման համակարգերում.

Պատուհան 15. Սմարթ քարտ (1-12 ամիս),

Պատուհան 16. Անվճար և բաժանորդային այցելուների հաշվարկման համակարգ:

ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Գաղտնիության պահպանում և երաշխավորում (թանգարանի տվյալների),

Ընդհանուր սխեմա բանկ-գանձապետարան համակարգերի համար,

Օգտագործման համար նախատեսված մատչելի գործիքներ,

Լեզվի ընտրության հնարավորություններ,

Ազդակ ամրագրված էքսկուրսիաների համար,

Քարտային վճարումների ընդունում,

Կապ թանգարանների սոցիալական կայքերի հետ (Հարց-պատասխան, աջակցություն, առաջարկություն, տեղեկություն՝ տեքստային, լուսանկարային),

Յուրաքանչյուր թանգարան իր առանձին մուտքանունով հնարավորություն ունենա տեսնելու և վերահսկելու իր ացելուների թվաքանակը, եկամուտը,

Տոմսերի վաճառքի անխափան ինտեգրում:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

UPS, QR սքանավորման համակարգեր, հիշողության սարքեր(ցանկացած պահի տեղի ունեցած գործարքների ցուցադրության նպատակով), առձեռն/թղթային/ տոմսերի տերմինալ (տեղում տպվող համակարգով):

Թանգարաններում էլեկտրոնային տոմսերի միասնական ավտոմատացված համակարգի ներդրման համար առաջարկում ենք դիտարկել հետևյալ բաղադրիչների ապահովումը՝

- անհատական տոմսերի ամրագրում և վաճառք,

- խմբակային տոմսերի ամրագրում և վաճառք,

- համալիր տոմսերի վաճառք մի քանի թանգարաններ այցելելու համար,

- էքսկուրսիաների վաճառք՝ հաշվի առնելով էքսկուրսավարների առկայությունը,

- հատուկ գնային քաղաքականություն տարիքային (չափահաս, երեխաներ), սոցիալական, - անհատական և խմբակային զեղչեր՝ հաշվի առնելով սեզոնային գործոնը, ինչպես նաև ժամային ակտիվությունը,

- զեղչեր տոմսերի քանակի համար,

- լրացուցիչ ծառայություններ, լուսանկարում, աուդիո ուղեցույց և այլն:

Միաժամանակ, առաջարկում ենք ներդրվող համապատասխան ծրագրում դիտարկել հնարավոր վիճակագրական տվյալների ստացումը ամսական կտրվածքով: Մասնավորապես, այցելուների քանակ (օտարերկրացի, ռեզիդենտ), տարիք, սեռ, փաթեթով կամ անհատական այցելություններ, էքսկուրսավարի առկայություն, աուդիո կամ առանց: